ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ

Վարդան Պետրոսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Աննիկ Գրիշայի Սավզյանի կողից 2025 թվականի 1-ոդ եռամսյակում

կատարած աշխատանքների վերաբերյալ

2025թ. 1 եռամսյակի ընթացքում իմ կողմից ք.Երևան Աբովյան 54 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության բժշկական վարչության 2025թ. 1-ոդ եռամսյակի ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշռի հաշվետվությունը, նաև դեղորայքի և վիրակապական նյութերի , սոցիալական փաթեթի, կոմունալ ծախսերի, աշխատակիցների թվաքանակի և դրամական բավարարման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների, հիմնական միջոցների, նյութական արժեքների շարժի վերաբերյալ հաշվետվությունները , ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Ընդունել եմ բժշկական վարչության աշխատողների հունվար,փետրվար, մարտ ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատրումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան վճարման ցուցակներ:

3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրեր:

4. Ներկայացված հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա կատարել եմ փոխանցումները:Բժշկական վարչության հաշվից կատարել եմ աշխատավարձի, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխանցումների, սոցիալական վճարի, եկամտային հարկի, դեղորայքի, և այլ վճարումները:

5. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը, անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկ:

6. Սահմանված ժամկետում կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին եմ ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի 2025թ. հունվար,փետրվար, մարտ ամիսների ամփոփ հաշվարկները:

7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները:

8. Կազմակերպել եմ առողջարանային ուղեգրերի ձեռք բերման աշխատանքները:

9. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Ա.Սավզյան

«30» 04 2025թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

«30» 04 2025թ.